

**Մեթոդաբանական պարզաբանումներ**

Մարդահամարի հաշվառման միավոր են հանդիսացել անհատական և խմբային (ինստիտուցիոնալ) տնային տնտեսությունները:

**Անհատական տնային տնտեսությունների** թվին են դասվել.

1. Առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում բնակվող **մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունը**, երբ անձն ինքնուրույն ապահովում է իրեն կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչով և ընդհանուր տնտեսություն վարելու համար տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները,

2. Առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող **երկու և ավելի անձանցից բաղկացած տնային տնտեսությունը**, որի անդամներն իրենց կենսաապահովման իրականացում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ և մեկը, և մյուսը:

**Խմբային (ինստիտուցիոնալ)** տնային տնտեսությունների թվին են դասվել մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, հատուկ նշանակության դպրոցներում (օրինակ՝ երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ երեխաների գիշերօթիկներում), ծերերի և հաշմանդամների տներում, կրոնական հիմնարկներում (օրինակ՝ մենաստաններում), բանտներում, ուղղիչ աշխատանքային գաղութներում և նման այլ հիմնարկներում համատեղ բնակվող բնակչության խմբերը: